



Մ ՈՒՐՐ Զ ԱԿՈՐ

ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ԱՄՅՐ ԵՒ ԿԵՂԵՅԻ



ՅԻՍԱԱԿԷՆ ԵՏԶ ԵՐԿՐՈՐԴ ԿԻՐԱԿԻ

4 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2022

Կիրակնօրեայ Ընթերցումներ	Էջ 1
Ծանուցումներ	Էջ 2

ԸՆԹԵՐՑՈՒՄ

ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ

(36.22-37.11)

Քեղկիայի որդի Եղիակիմը, որ արքունի հազարապետն էր, հրովարտականերու քարտուղար Սոմնասը եւ Ասափի որդի Յովաքը, որ արձանագրութիւն պահող քարտուղարն էր, իրենց վերարկունները պատռած՝ եկան Եզեկիա թագաւորին մօտ, եւ Սենեքերիմի հրամանատարին խօսքերը փոխանցեցին:

Եզեկիա երբ լսեց՝ իր հազուատները պատռեց, քուրճ հագաւ եւ ելաւ Տիրոջ տաճարը գնաց, եւ Եղիակիմ հազարապետը, քարտուղար Սոմնասն ու տաճարի քահանաներէն ծերերը, բոլորն ալ քուրճեր հագած, զրկեց Ամոսի որդի Եսայի մարգարէին քով, որ պէսզի անոր ըսեն. «Եզեկիա այսպէս կ'ըսէ.՝ Այսօր սուգի, նախատինքի, կշտամբանքի եւ բարկութեան օր է: Ծննդական կնոջ պէս՝ երկունքը բռներ է մեզ, բայց ոյժ չունինք ծնանելու: Թող քու Տէր Աստուածդ լսէ թէ ի՛նչ կ'ըսէ Ասորեստանի թագաւորին հրամանատարը, որ իր Տիրոջ կողմէ զրկուեցաւ կենդանի Աստուածը նախատելու ա՛յն նախատական խօսքերով, որ քու Տէր Աստուածդ լսեց: Արդ, հարցուր քու Տէր Աստուծոյդ, ի՞նչ պիտի ըլլայ մնացողներուս վիճակը»:

Երբ Եզեկիա թագաւորին ծառաները Եսայիի քով եկան, Եսայի ըսաւ անոնց. «Հետեւեալը ըսէք ձեր տիրոջ.՝ Այսպէս կ'ըսէ

Տէրը. Մի՛ վախնար այն խօսքերէն որ լսեցիր եւ որոնցմով Ասորեստանի թագաւորին պատգամաւորները զիս նախատեցին: Ահաւասիկ ես անոր հոգին պիտի խռովեմ այնպիսի լուրով մը, որ ստանալուն պէս իր երկիրը պիտի վերագառնայ եւ հոն սուրով պիտի սպաննուի»:

Ասորեստանի թագաւորին հրամանատարը վերագարձաւ իր տիրոջ մօտ, որ Լաքիշէն ելած եւ Լիբնա քաղաքը պաշարած էր: Այնտեղ Սենեքերիմ լսելով որ Եթովպիոյ Թարակա թագաւորը իր վրայ յարձակած է, անոր դէմ դարձաւ: Նոյն ատեն պատգամաւորներ զրկեց Եզեկիային, ըսելով. «Այսպէս ըսէք Հրէաստանի թագաւոր Եզեկիային.՝ Այն Աստուածը որուն ապաւիններ ես՝ թող քեզ չխաբէ, ըսելով թէ Երուսաղէմը Ասորեստանի թագաւորին ձեռքը պիտի չմատնուի: Մի՛թէ չլսեցի՞ր թէ ի՛նչպէս Ասորեստանի թագաւորները ամբողջ աշխարհը կործանեցին: Կը կարծես որ դուն պիտի ազատի՞ս»:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ

ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ

ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԷՆ

(4.1-11)

Այսպէս, ուրեմն, եղբայրներ, մենք է ձեզի սորվեցուցինք թէ ի՛նչպէս պէտք է ապրիլ Աստուծոյ հաճելի ըլլալու համար: Թէպէտ այդպէս կ'ապրինք արդէն, սակայն կը խնդրենք եւ Տէր Յիսուս Քրիստոսի անունով կը թելադրենք որ շարունակէք յառաջանալ ներկայ ձեր ընթացքին մէջ: Գիտէք թէ ի՛նչ պատուէրներ տուինք ձեզի Տէր Յիսուսի անունով, որովհետեւ Աստուծոյ կամքն է որ դուք սրբուիք եւ ամենեւին հեռու մնաք

պոռնկութենէ: Զեզմէ իւրաքանչիւրը թող սրբութեամբ ու պատուով ամուսնանայ: Կրքոտ ցանկութիւններու անձնատուր մի՛ ըլլաք հեթանոսներուն պէս, որոնք զԱստուած չեն ճանչնար. կամ չըլլայ որ մէկը եղբօր մը դէմ մեղանչէ անոր կիներ յափշտակելով, որովհետեւ այդ բոլորին համար Տէրը իր դատաստանին մէջ անողոք պիտի ըլլայ, ինչպէս սկիզբէն ըսինք ձեզի եւ ազդարարեցինք: Միթէ Աստուած մեր պղծալից կեանքը շարունակելո՞ւ հրաւիրեց մեզ, թէ սրբութեամբ ապրելու: Անշուշտ թէ սրբութեամբ ապրելու: Հետեւաբար ով որ սրբութեան այս պատուէրը կ'արհամարհէ՝ մարդ մը անարգած չ'ըլլար, այլ նոյնինքն զԱստուած, որ իր Սուրբ Հոգին կու տայ մեզի:

Գալով եղբայրսիրութեան, մեր գրելուն պէտք չունիք, որովհետեւ ինքնին դուք Աստուծմէ սորված էք զիրար սիրել, ինչպէս արդէն գործնապէս ցոյց կու տաք այդ սէրը ամբողջ Մակեդոնիայի բոլոր եղբայրներուն նկատմամբ: Բայց դարձեալ, եղբայրներ, կը խնդրենք որ աւելի առատանաք ձեր սիրոյն մէջ, ջանաք հանդարտ կեանք մը վարել, միայն ձեր գործին նայիլ եւ ձեր աշխատանքի վաստակով ապրիլ, ինչպէս որ պատուիրեցինք ձեզի, որպէսզի ձեր պարկեշտ ընթացքով յարգուիք Հաւատացողներէն եւ ոեւէ մէկուն կարօտ չմնաք:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ
(13.1-9)

Ո մանք եկան Յիսուսի եւ պատմեցին այն գալիլիացիներուն մասին, որոնք Պիղատոսի կողմէ սպաննուեցան, երբ Աստուծոյ զօհ կը մատուցանէին: Յիսուս անոնց ըսաւ. «Կը կարծէ՞ք թէ սպաննուող գալիլիացիները միւս բոլոր գալիլիացիներէն աւելի մեղաւոր էին, որ այդպիսի վախճան մը ունեցան: Ո՛չ: Կ'ըսեմ ձեզի, որ եթէ չապաշխարէք՝ դուք բոլորդ ալ նոյնպէս պիտի մեռնիք: Կամ ի՞նչ կը մտածէք այն տասնեւութ մարդոց մասին, որոնց վրայ

ինկաւ աշտարակը Սելովամի մէջ եւ սպաննեց զանոնք: Անոնք աւելի՞ յանցաւոր էին քան Երուսաղէմի բոլոր բնակիչները: Ո՛չ: Կ'ըսեմ ձեզի, որ եթէ չապաշխարէք՝ բոլորդ ալ նոյնպէս պիտի մեռնիք»:

Անոնց հետեւեալ առակը պատմեց. «Մարդ մը կար որ իր այգիին մէջ թղենի մը տնկած էր: Երբ ժամանակը եղաւ, թուզ քաղելու գնաց, բայց թղենիին վրայ պտուղ չգտաւ: Այգեպանին ըսաւ. “Այս երրորդ տարին է որ կու գամ թուզ քաղելու, բայց չեմ գտներ: Ուստի կտրէ՛ զայն, ինչն՞ անիմաստ կերպով տեղ գրաւէ”: Այգեպանը պատասխանեց. “Տէ՛ր, թող այս տարի ալ մնայ. ես իր շուրջի հողը կրկին կը փորեմ եւ պարարտացուցիչ կը դնեմ: Այս ձեւով թերեւս պտուղ տայ. ապա թէ ոչ՝ գալ տարի կտրէ զայն”»:

ՀՈԳԵՀԱՆԳԱՏԵԱՆ
ՁԵՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԵՐՈՆ
ԱՆԽՕՐՕՔ ԿԱՏԱՐԵՃԷՔ ԿԱՊՈՒԵԼՈՎ
ԵԿԵՂԵՃՈՅ ԴԻՒԱՆԱՏՈՒՆ:

ԱՅԵԼԵՅԷ՛Ք ԵԿԵՂԵՃՈՅՍ
ԴԻՒԱՏԵՏՐԻ ԷՁԸ
ԵՒ ՁԵՐ ՀԱՒԱՆՈՒԹԻՒՆ յԱՅՏԵՃԷՔ
(like).
www.facebook.com/SourpHagopChurchMontreal
ԱՅԵԼԵՅԷ՛Ք ԱՆԵՒ
Ս. ՅԱԿՈՒ ԱՌԱՋԱՆՈՒԴԱՆԻՍ ՄԱՅՐ
ԵԿԵՂԵՃՈՅ ԿԱՅԷՁԸ՝
www.sourphagop.net